ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԴԱՐԱՍԿԶԲԻ «ՄՇԱԿՈՒՄ»

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

Գրիգոր Արծրունու մահով ավարտվում է «դասական» «Մշակի» ժամանակաշրջանը։ Անցյալ դարի 90-ական թվականներին դեռևս շարունակվում էր նախորդ տասնամյակների իներցիան՝ կենսունակ պահելու տնտեսական զարգացման հարցերի վերաբերյալ թերթի ավանդները, «հասարակաշինության» նրա դավանած ծրագիրը։ Իսկ արդեն 1900-ական թվականներին «Մշակի» համար սկսվում է մի նոր շրջափուլ։ Եթե նախորդ ժամանակաշրջանի «Մշակին» բնորոշ էին հասարակական կյանքի «տնտեսական կետից» կատարվող վերլուծությունները, ինչպես կոնկրետ տնտեսական, այնպես էլ տեսական հարցերի վերաբերյալ հետազոտությունները, ապա դարասկզբին, կապված պատմական իրադարձությունների շրջարեկման հետ, թերթը գերազանցապես ուշադրություն էր սևեռում սոցիալ-քաղաքական անցուդարձի խնդիրների վրա։ Հասարակական զարգացման «բարենորոգչական» այն պրակտիկ ծրագրերը, որ առաջադրում էր «Մշակը» 1870-ական թվականներից և որոնք հանգամանորեն լուսաբանված են հրապարակի վրա եղած աշխատություններում, այս կամ այն ձևով կրկնում էր նաև դարասկզբին։ Տվյալ դեպքում մեզ ավելի շատ հետաքրքրում են տնտեսագիտական հարցերի վերաբերյալ այն տեսական արծարծումները, որ կատարվել են 1900-ական թվականների «Մշակում»։

Դարասկիզբը հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման նոր որոնումների ժամանակաշրջան էր։ Ինչպես և մեկ դար առաջ՝ հասարակական հայեցության առաջ ծառանում են բազմաթիվ նոր անհայտներ, նոր պատրանքներ՝ կապվելով XX դարի հետ, ակնկալվում նոր սպասումներ հասարակության կենսական հարցերի լուծման ասպարեզում։ «Տանջված մարդկության համար վերջին տասնիններորդ դարը,— գրում է «Մշակը»,— նշանավոր է նրանով, որ նա բացեց ապագա ուրախությունների մեծ հեռանկարներ։ Իրականությունը դեռ քիչ է փոխված, բայց նա մոտեցրած էր մի շավղի, որ տանում է դեպի երագների և ոսկե հույսերի իրագործությունը։ Առաջիկա քսաներորդ դարը, որի մեջ մտնում ենք այսօր, պետք է պատասխան տա մեր հասարակական հարցերին և լուծե մի շարք գորդյան հանգույցներ»[1]։ Սակայն հասարակական նորոգության «Մշակի» հայեցությունը նոր բան չէր ենթադրում։ Ու թեև «իդեալական հասարակարգի» գաղափարը համարվում էր անիրագործելի և մի ինչ որ տեղ նույնիսկ անընդունելի, այնուամենայնիվ, աստիճանական կատարելագործությունն այն միակ ուղին էր, իսկ XX դարը հասարակության պատմության այն պատվանդաններից մեկը, որի «ընթացքում և իր ճանապարհին պիտի բարձրանա մի նոր, ավելի բարձր գագաթի վրա, որից ավելի պայծառ երևա իդեալի ուղեցույց լույսը»[2]։

Եվ ահա թերթի հեղինակներից Մ. Հ.-ն մտորումներ է անում հասարակական առաջընթացի, քաղաքակրթության ու գիտության առաջադրած, բայց և նրա կարծիքով ըստ էության անպատասխան մնացած հարցերի վերաբերյալ։ «Գիտությունը և փիլիսոփայությունը, չնայած իրանց հրաշալի ընդհանրացումներին,— գրում է նա,— անկարող եղան պատասխանել մետաֆիզիկայի դրած հարցերին՝ ինչ է տիեզերքը, նրա պատճառը, նրա նպատակը... ուր է տանում պրոգրեսը, ուր է արդյոք այն «գերագույն երջանկությունը», որ այնքան խան-

---

1 «Մշակ», 1901, № 1։

2 Նույն տեղում։

դավառությամբ հռչակել են բարոյագետ փիլիսոփաները անհիշատակ ժամանակներից»[3]։ Անցած պատմաշրջանների տնտեսական, փիլիսոփայական ու սոցիալական ուսմունքներից յուրաքանչյուրը առաջադրում էր իր համակարգը հասարակական ներհակությունների լուծման ուղղությամբ։ Սակայն «Մշակի» հեղինակի կարծիքով, դրանք բոլորն էլ ունեցել են միագիծ բովանդակություն և իրենց էությամբ հոռետեսական են «երջանկության առեղծվածի» հարցերում։ Նա քննադատում է Ժ. Ժ. Ռուսոյի հասարակության «բնական վիճակի» վերաբերյալ տեսությունը, որի ժամանակ իբր մարդկանց միջև տիրել է համերաշխություն ու ներդաշնակություն, որ չնայած նրա «հասարակական դաշինքի» հրատարակումից անցել է մեկ ու կես դար, սակայն ոչ միայն թուլացել է Թ. Հոբսի հռչակված «բոլորի պատերազմը բոլորի դեմ» սկզբունքը, այլև «քաղաքական բռնակալությունը փոխարինվեց կապիտալի բռնակալությամբ։ Գոյության կռիվը ստացավ ավելի ուժ և տենդոտ կերպարանք»[4]։ Բարոյագիտությունը առաջադիմեց, միջին դարերի աստվածաբանությանը փոխարինեց Է. Կանտի ռացիոնալիզմը, «աստվածային սանկցիան տեղի տվեց մարդկային գերագույն ու անկախ բանականության սանկցիային», «մշակվեցին անթիվ անհամար կատեգորիաներ», որոնք նպատակ ունեին հասարակական հարաբերությունների բարոյական կատարելագործման միջոցով հաղթահարելու «սանձարձակ «ես»-ի պաշտամունքը»[5]։ Հասարակության տնտեսական ու սոցիալական ներհակությունները ոչ միայն չթուլացան, այլև նոր տնտեսակարգի հաղթանակով ավելի խորացան։ Դասակարգային հակասություններն առավել ցայտուն արտահայտվեցին Անգլիայում, որն էլ ավելի խորացավ խոշոր մեքենայական արտադրության հաղթանակով։

Ինչպես հայտնի է, անգլիական դասական տնտեսագիտության կամ «ազատ դպրոցի» ներկայացուցիչները, ելնելով անհատականության սկզբունքից և ժխտելով ամեն մի օրենսդրական միջամտություն, կարծում էին, թե եկել է «բանական թագավորության» ժամանակաշրջանը և իբր տնտեսական կյանքում կատարյալ ազատությունն ինքնաբերաբար կլուծի դասակարգային, տնտեսական ու սոցիալական առկա հակամարտությունները։ Անտարակույս, տնտեսական առաջադիմության առումով քաղաքականության նվաճումներն անառարկելի էին, սակայն հասարակությունը տրոհվեց երկու հակամարտ դասակարգերի. «միջնադարյան ֆեոդալական կաշկանդումները չկային այլևս. ազատ էր անհատը։ Ազատ՝ ապրելու, բայց և ազատ՝ մեռնելու. եթե նա ունի բավականաչափ նյութական ուժ ու տոկունություն կարող է ապրել ու հարատևել, իսկ եթե միայն իր ողորմելի մկանների տերն է՝ վաղ, թե ուշ կկորչի կյանքի հորձանուտում» համալրելով «ինդուստրիալ պահեստային բանակի» շարքերը[6]։ Այսպիսով, նորից «ուժեղագույնների, հարմարվողների հարատևություն»[7], մի սկզբունք, որն իր տեսական հիմնավորումն է ստացել Չ. Դարվինի և Հ. Սպենսերի աշխատություններում։ Ակներև է այն միակողմանի մոտեցումը, որ ցուցաբերում է հեղինակը մարդկային հասարակարգի ու բնության զարգացման օրենքների հանդեպ։ Սակայն հեղինակի խոսքը վերաբերում է սոցիալ-դարվինիզմի գոյության կռվի օրենքին, որպես կենդանական ու հասարակական կյանքի ունիվերսալ օրենք։ Ֆ. Էնգելսը Պ. Լավրովին գրած նամակներից մեկում նկատում է, որ գոյության կռիվ բանաձևը «նույնիսկ բնության մեջ միայն խիստ պայմանականորեն կարող է ընդունվել», իսկ եթե հասարակության համար «մի վայրկյան ուժի մեջ թողնենք այդ կատեգորիան,—այսպիսով, <այն> դառնում է կռիվ հաճույքների համար, կռիվ ոչ միայն գոյության միջոցների, այլև զարգացման միջոցների համար, իսկ այդ աստիճանի նկատ-

3 Նույն տեղում, 1902, № 97։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։

համար։ կենդանիների աշխարհի կատեգորիաները արդեն չեն կարող կիրառվել։ ...Ի միջի այլոց, բավական է պատմության նախորդ ընթացքը դիտել որպես դասակարգային ճակատամարտերի անընդհատ շարք, որպեսզի պարզ դառնա այդ պատմության այն ըմբռնման ամբողջ մակերեսայնությունը, թե իբր պատմությունը «գոյության կռվի» արտահայտությունների աննշան վարիացիա է ներկայացնում։ Ուստի ես երբեք այդպիսի զիջում չէի անի այդ կեղծ նատուրալիստներին»[8]։

«Մշակի» հեղինակի կարծիքով պեսիմիստ էր նաև Լ. Տոլստոյը՝ «տոգորված քրիստոնեական կրոնի հիմնական, համամարդկային սկզբունքներով», որը կռվի ու բիրտ ուժի փոխարեն սեր էր քարոզում, կարծելով թե, եթե մարդկանց կյանքի ու գործունեության հիմքում դրվեն ինչ-ինչ բարոյական սկզբունքներ, ապա հնարավոր կդառնա հասարակական զարգացումը տանելու դեպի բնական ու արդարացի կարգերի[9]։ Նույն դիտակետից «Մշակի» մի այլ հեղինակ՝ Ն. Ազատը, XVIII դարի փիլիսոփաների և Լ. Տոլստոյի հայացքների տարբերությունը տեսնում էր այն բանում, որ եթե առաջինները հավասարության վերաբերյալ իրենց «դեզատոմսերն առաջարկում էին թագավորներին», ապա ռուս մտածողին թվում էր, թե «առանց օրենքների օգնության էլ բավական է միայն, որ մարդիկ ընդունեն իր խրատներն ու քարոզները և սրանց համաձայն կարգավորեն իրենց մասնավոր ու անհատական կյանքը»[10]։ «Այդպես են բոլոր ուտոպիստները,— եզրակացնում է Մ. Հ.-ն,— կյանքի հսկայական պրոբլեմը պատկերանում է նրանց չափազանց պարզ, անպաճույճ և նրանք գրչի մի ուժգին հարվածով խիզախում են տալ նրա լուծումը։ Ուտոպիստ էր Ռուսոն, որ իր սրտաշարժ միամտության մեջ կարծում էր tabula rasa անել հազարավոր տարիների կուլտուրական պրոցեսը և ետ շրջել մարդկությունը դեպի նախնական, առերևույթ «երջանիկ», բայց իրոք վայրենի և արհավրալից շրջանը։ Ուտոպիստ էր Կարլայլը, որը XX դարի շեմքում ուզում էր ետ կանչել վաղուց արդեն հաղթահարված կաստային ֆեոդալականության ուրվականը։ Ուտոպիստ էին Նիցշեն և Շոպենհաուերը, որոնք ուզում էին առոչինչն համարել մինչև այժմ եղած հսկա պրոգրեսը և հավակնած էին վայրագ էգոիզմի թագավորություն հիմնել ժամանակակից կարգերի փլատակների վրա։ Ուտոպիստ էր Տոլստոյը, որը հավատում էր իր քարոզների ամենակարող ուժին»[11]։ Հասարակական ուսմունքների՝ հեղինակի վերլուծությունները բնորոշվում են սահմանափակ ըմբռնումներով։ Այն, ինչ իրագործելի չէ, ուրեմն հռետեսական է։ Այդ միակողմանի վերլուծությունը հանգեցնում է նրան, որ մի կողմ է թողնում այդ ուսմունքների ներքին կապերի բացահայտումը՝ դրանց առանձին տարրերը հարմարեցնելով նախապես առաջադրված գրույթի արդարացմանը։ Եվ պատահական չէ հոդվածի «Պեսիմիզմը հասարակական գիտության մեջ (երջանկության առեղծվածը)» վերնագիրը։ Թերևս դրանով պիտի բացատրվի այն հանգամանքը, որ հեղինակը չտարբերակելով այդ ուսմունքների ներքին ուղղվածությունը, դրանք քննության է ենթարկում մի ընդհանուր դիտակետից, շնչմարելով դրանց ինչպես առաջադիմական, այնպես էլ հետադիմական կողմերը։ Եվ այսպես մի ընդհանուր տեսանկյան տակ են դրվում Ժ. Ժ. Ռուսոյի՝ տիրող կարգերի իր բովանդակությամբ դեմոկրատական քննադատությունն ու սոցիալական երազանքի հետադիմական հայեցությունը, Թ. Կառլեյլի պանթեիզմն ու «ֆեոդալական սոցիալիզմը», չնշմարելով վերջինիս ուսմունքում անցյալի ու ներկայի դիալեկտիկայի, բուրժուական Անգլիայի քննադատության հարցերում այն գրականը, որով նա անսահմանորեն առաջ անցավ իր ժամանակի

---

8 «Հ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954, էջ 274, 276։

9 «Մշակ», 1902, № 99։

10 Նույն տեղում, 1908, № 188։

11 Նույն տեղում, 1902, № 99։

կրթված անգլիացի ինտելիգենտների հայացքներից[12]. Ֆ. Նիցշեի ու Մ. Շտիրների հոռետեսությունն ու նիհիլիզմը համադրվում է Լ. Տոլստոյի ռեակցիոն-ուտոպիական իդեաների հետ, վերջինիս ուսմունքի մեջ չառանձնացնելով այն «քննադատական տարրերը», որոնք ընդունակ են «արժեքավոր նյութ տալու առաջավոր դասակարգերի լուսավորության համար»[13]։ Այստեղից էլ հեղինակի այն հետևությունը, թե «ռուսներն ու տոլստոյները քաղաքակրթության ստվերային կողմերն են միայն տեսնում, հուսախաբ ու ցավագին խարազանում են առաջադիմությունը, պրոգրեսը»[14]։ Բայց ինչպիսի՞ն պիտի լինի հեղինակի կարծիքով հասարակական առաջընթացը, ի՞նչ օրենքների են ենթակա նրա տնտեսական ու սոցիալական պրոցեսները։ «Հասարակական գիտությունը, էվոլյուցիոնիզմի դոկտրինից հրահանգված,— գրում է նա,— ուսուցանում է մեզ, որ ժամանակակից մարդը ճակատագրորեն կրում է իր մեջ իր հեռավոր, անասնական նախնիների բնազդումները, որ էգոիզմը նրա էական հատկանիշն է, որ դաստիարակությունը մեղմում է, անշուշտ, նրա մոլեգնությունը, սակայն չէ կարողանում իսպառ վերացնել։ Բայց սոցիոլոգիան ուսուցանում է նաև, որ ալտրուիզմը ևս կազմում է և կազմել է միշտ մարդկային էության հիմնական ատրիբուտը։ Էգոիզմ և ալտրուիզմ, մինը՝ կռվի և ատելության, մյուսը՝ սիրո և համերաշխության սկզբունք՝ թագավորել են ի սկզբանե իբրև երկու հակոտնյա, բայց և իբրև փոխադարձ լրացումներ։ Եթե անգամ ալտրուիզմը վերջնական քննությամբ վերածվի էգոիզմի՝ դա չէ կարող այնուամենայնիվ ժխտել երկու հոգեկան բնազդումների ինքնուրույն գոյությունը»[15]։ Հեղինակի վրա միանգամայն ակներև է Աղամ Սմիթի «Բարոյական զգացմունքների տեսություն» աշխատության ազդեցությունը։ Հայ հեղինակը, ինչպես դա անում էր Ա. Սմիթը, ելնում էր մարդկանց գործելակերպի բացարձակ, «բնական» օրենքներից, չհասկանալով, որ էթիկան իր հիմքում որոշվում է տվյալ հասարակարգի սոցիալ-տնտեսական կարգով։ Սակայն եթե Ա. Սմիթը, ժխտելով կրոնական բարոյականությունը և «բնածին բարոյականության զգացմունքները», դրանց տեղը դնում էր մի այլ վերացական սկզբունք՝ «համակրության սկզբունքը»[16], ապա «Մշակի» տեսաբանը էգոիզմի սկզբունքը լրացնում է ալտրուիզմի սկզբունքով։ Այսինքն, նա փորձում է լուծել կապիտալիզմի պայմաններում գոյություն ունեցող անլուծելի հակասությունն էգոիզմի ու ալտրուիզմի միջև, հակասություն, որը կարող է վերացվել միայն սոցիալական, տնտեսական ու դասակարգային հակամարտությունների վերացման միջոցով։ «Թվում է թե երկու սկզբունքներն էլ հավիտենական են,— գրում է հեղինակը,— բայց որքան փոխվում են նրանք ժամանակի հոսանքում։ Անժխտելի է, որ քաղաքակրթության պրոգրեսի ընթացքում կռվի սկզբունքը աստիճանաբար թուլանում, մարդկայնանում է, այնինչ համերաշխության փաստը շեղվում է միշտ ավելի ուժեղ և ցայտուն։ Եվ նորագույն հասարակական գիտությունը սանկցիա է տալիս այդ համերաշխության, որով միայն պիտի հնարավոր լինի բառնալ տիրող չարիքները, բառնալ կռվի սկզբունքը ընդհանրապես և փոխարինել նրան խաղաղ օրինավոր մրցումով»[17]։ Ակներև է, որ հեղինակի հայեցությունը ելակետ ունի «շահերի ներդաշնակության» տեսությունը և իր էությամբ ռեֆորմատորական է։ Դավանելով առաջադիմության լիբերալ գաղափարներ, նա կարծում էր, թե էգոիզմն ու ալտրուիզմը հարատև են, սակայն կապիտալիզմն իր զարգացման ընթացքում, աստիճանական ինքնակատարելագործման միջոցով, առանց հեղափոխական ցնցումների կտանի

12 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 1, с. 589.

13 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 20, էջ 124։

14 «Մշակ», 1902, № 99։

15 Նույն տեղում։

16 А. В. Аникин, Юность науки, М., 1979, с. 167—168, նույնը տե՛ս Մ. Ն. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին։ Երևան, 1968, էջ 327։

17 «Մշակ», 1902, № 99։

մասնավոր արտադրանքի պայմաններում այդ երկու հակոտնյա սկզբունքների, փոխադարձ համալրման միջոցով, հասարակական ներհակությունների վերացմանը։

Անդրկովկասի տնտեսական զարգացման համար դարասկիզբը բնորոշվում է նոր փոփոխություններով։ 1900-ական թվականները երկրամասի համար նշանավորում են տնտեսական զարգացման բուռն ու ինտենսիվ շրջափուլի սկիզբը՝ տնտեսագիտական միտքն զբաղեցնելով նոր արծարծումներով։

Տնտեսագիտության տեսությունը երկրների միջև առևտրի քաղաքականության բնագավառում տարբերակում է երկու ուղղություն՝ պրոտեկցիոնիզմի կամ հովանավորական և ազատ առևտրի կամ ֆրիտրիդերականության քաղաքականությունը։ Ելնելով զարգացման առանձնահատկություններից՝ երկրները կիրառում են այս կամ այն քաղաքականությունը։ Անգլիան առաջինը դիմեց ազատ առևտրի քաղաքականությանը։ Արդյունաբերական հեղաշրջումը եվրոպական մայրցամաքի մյուս երկրներում շատ ավելի ուշ կատարվեց, քան Անգլիայում։ Արտադրողական ուժերի զարգացման աստիճանով Անգլիան անհամեմատ բարձր էր կապիտալիստական մյուս երկրներից, իսկ դա այն նյութական հիմքն է, որը նրան դրեց ամեն մի մրցակցությունից դուրս վիճակում, առևտրում հռչակելով անսահմանափակ ազատության սկզբունքը և հետևելով դրան մինչև XIX դ. վերջը։ «Մշակի» հեղինակ Սարուխանը նշում է այն մեծ դերը, որ խաղացել են տնտեսագետներ Կոբդենը, Ռ. Միլը և Ջ. Բրայթը՝ Անգլիայում ազատ առևտրի սկզբունքների առաջադրման ու տեսական հիմնավորման գործում։ Նրա կարծիքով Անգլիա ներմուծվող ապրանքների վրա մաքսերի վերացումը պայմանավորված էր այն բանով, որ «Անգլիան երկրագործության և գյուղատնտեսության համար հարմար երկիր չէ։ Նրա... արդյունաբերությունը ժողովրդի հազիվ 1/3 մասը կարող է կերակրել, ուրեմն եթե դրսից բերված հացահատիկների, յուղի, մսի և այլ գյուղատնտեսական արդյունքների վրա մաքս դրվի, ապրուստի գինը պիտի բարձրանա, որը պիտի ազդե գլխավորաբար հասարակ ժողովրդի և բանվոր դասակարգի վրա, որոնք այդ թանկության պատճառով կամ լավ սնունդ պիտի չկարենան ունենալ և կամ իրանք էլ բարձր օրավարձ պիտի պահանջեն գործարանատերերից»[18]։ Իսկ որքանով Անգլիան, շարունակում է հեղինակը, իր գործարանների համար անհրաժեշտ հումքը ներմուծում է այլ երկրներից, ուստի մաքսեր սահմանելու դեպքում կընկներ մյուս երկրների հետ հայրենական գործարանատերերի մրցունակությունը՝ դժվարացնելով ապրանքների արտահանությունը։ Սակայն Անգլիայի վարած տնտեսական այդ քաղաքականությունը տնտեսական, դասակարգային ու քաղաքական ավելի խոր շահեր էր ակնկալում, քան ենթադրում է «Մշակի» հեղինակը։ Իր էությամբ դա ոչ միայն տնտեսական մասնակի խնդրի շուրջ կատարվող պայքար էր, այլ տասնամյակներ շարունակվող տարբեր դասակարգերի տնտեսական շահերի պայքար։ Եվ արդեն 1840-ական թվականների կեսերին Անգլիան վերջնականապես անցնում է ազատ առևտրի սկզբունքին, դրան հետևելով մինչև դարավերջը։ Արտաքուստ դա մի ակտ էր, որից շահում էին նաև Անգլիայի գործընկերները, որոնք նրանից ստանում էին սարքավորումներ։ Սակայն իրականում Անգլիան տնտեսական զարգացման շնորհիվ իր համար ստեղծել էր առավել բարենպաստ պայմաններ, քանի որ մի կողմից ապահովել էր իր արտադրանքի իրացումն արտաքին շուկայում, իսկ մյուս կողմից՝ էժանագին հումքի ու մթերքների ներմուծումը[19]։ Այնուամենայնիվ, համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ Անգլիայի մենաշնորհը աստիճանաբար սկսում է նվազել և մի շարք երկրներ արդեն դարի վերջերին մաքսային քաղաքականությամբ հովանավորում էին հայրենական արդյունաբերության զարգացումն ու պաշտպանվում անգլիական մրցակցու-

---

18 Նույն տեղում, 1909, № 131։

19 Հանգամանքին տե՛ս «Экономическая история капиталистических стран», М., 1973, с. 128—132.

թյունից։ Այդ երկրներից էր Գերմանիան։ Երկրի տնտեսական քաղաքականության հարցերին անդրադարձել են Գ. Շմոլերը, Լ. Բրենտանոն, Ա. Վագները, Ա. Շեֆլեն և շատ ուրիշներ։ Տարբեր առիթներով անդրադառնալով այդ տեսակետներին, «Մշակը» չի որոշակիացնում իր կարծիքը, ըստ էության ընդունելով Գերմանիայում այդ հարցի վերաբերյալ եղած մտայնությունը։

Հարկ է նկատել, որ «Մշակն» ընդհանրապես ոչ միշտ է դրվատում պրոտեկցիոնիզմի քաղաքականությունը։ «Ամեն անգամ, երբ մի որևէ արհեստ սկսում է անհաջողությունների հանդիպել,— գրում էր Թերթը,— այդ արհեստի ներկայացուցիչները, փոխանակ կատարելագործությունների մասին մտածելու և մրցության ուրիշ միջոցներ մշակելու, դիմում են կառավարությանը՝ խնդրելով արտոնություններ իրենց համար։ Նրանք խնդրում են, օրինակ, մաքսադնել ներմուծվող ապրանքների վրա և այդպիսով արհեստական կերպով բարձրացնել գները շուկայում, կամ պահանջում են, որ իրենց արդյունագործության զարգացման համար մաքսի ենթարկվեն այն հում նյութերը, որոնք արտահանվում են դեպի օտար երկրներ, և այդպիսով ուրեմն արհեստականորեն էժանացվեն նրանց արդյունագործության համար կարևոր նյութերը»[20]։ Հեղինակի ակնարկը վերաբերում է Ռուսաստանի տնտեսական քաղաքականությանը։ Մինչև անցյալ դարի 70-ական թվականները Ռուսաստանի արդյունաբերությունն ապահովված չէր արտասահմանյան մրցակցությունից և, ըստ էության, ցածր մաքսերը ենթադրում էին արտաքին առևտրում ազատ քաղաքականություն։ 1870-ական թվականներից ռուսական պետությունը սկսեց ձեռնարկել մի շարք մաքսային միջոցառումներ, որոնք նպատակ ունեին հովանավորելու հայրենական արդյունաբերության զարգացումը։ «Մշակը» մի անգամ չէ, որ անդրադարձել է Ռուսաստանում իրականացվող այդ հովանավորական քաղաքականության մանրամասներին ու նպատակներին, նշելով, որ բարձր մաքսերից տուժում են միայն սպառողները[21]։ Ինչպես վերը նկատեցինք, Թերթը նորից է շեշտում այն հանգամանքը, որ հայրենական արդյունաբերության հովանավորումն ակնկալող մաքսերի բարձրացման հետևանքով գների աճը մեծ եկամուտներ է բերում արդյունաբերողներին և հաճախ կորցնում խթանիչ դերը արտադրության կատարելագործման բնագավառում։ Թերթը գրում էր, որ անհրաժեշտ է ամեն կերպ խոչընդոտել հում նյութերի արտահանությանը, քանի որ «մենք ծախում ենք մեր հում նյութերը ուրիշներին և հետո նույնը գնում ենք մշակված և ավելի ևս թանկացած»[22]։ Տեղում մշակելու տնտեսական օգուտն ավելի մեծ է, որին հասնելու համար անհրաժեշտ են երկու հիմնական պայմաններ՝ «զարգացնել մեր մեջ տեխնիկայի կատարելագործումը, իսկ մյուս կողմից ուժեղացնել մեր ազգաբնակչության սպառող ընդունակությունը» և ներքին շուկայի պահանջները լրացնելուց հետո միայն ավելցուկը արտահանել արտաքին շուկա[23]։ Ակներև է, որ եթե մի կողմից նման հայեցակետն ընդհանրություններ է հայտաբերում մերկանտիլիզմի հետ, ըստ որի սեփական հումքից պատրաստած արդյունքի ներմուծումը հանգեցնում է երկրի աղքատացմանը, ապա մյուս կողմից փորձ է արվում. արտաքին տնտեսական կապերը դնել ինչ որ շրջագծի մեջ և ապահովել արդյունքի իրացումը հիմնականում տեղական շուկայի սահմաններում։ Եվ դա այն դեպքում, երբ Անդրկովկասն արդեն վաղուց ներդրավվել էր համաշխարհային ապրանքային շրջանառության ոլորտը։ Հեղինակը չի նկատում, որ դրանում դրսևորվում է կապիտալիզմի օրինաչափություններից մեկը, որ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «արտաքին շուկան անհրաժեշտ է այն պատճառով, որ կապիտալիստական արտադրությանը ներ-

---

20 Նույն տեղում, 1901, № 82։

21 Նույն տեղում, 1898, № 33։

22 Նույն տեղում, 1901, № 249։

23 Նույն տեղում։

հատուկ է անսահմանորեն ընդարձակվելու ձգտումը, ի հակադրություն արտադրության բոլոր հին եղանակների»[24]։

1900-ական թվականների սկզբներին Ռուսաստանի տնտեսական կյանքը բնորոշվում է նոր իրողություններով։ Սկսվում է նոր տնտեսական ճգնաժամ։ Այն տնտեսական խոր հետևանքներ ունեցավ նաև Անդրկովկասի մի շարք առաջավոր ճյուղերի և հատկապես նավթարդյունաբերության վրա։ «Մշակի» տեսաբաններից Ֆ. Մարդանյանը նկատում է, որ ճգնաժամի հետևանքով նավթի գները սաստիկ ընկել են, սնանկացել են հսկայական թվով մանր ու միջակ ձեռնարկություններ, հակառակ 1890-ական թվականների բարձր գների և զարգացման տեմպերի։ Նրան թվում էր, թե շրջանառության ոլորտի կարգավորման միջոցով կարելի է խուսափել տնտեսական ճգնաժամերից։ Վերջիններս կապելով նախորդ տարիների գների բարձր մակարդակի հետ, նա առաջարկում էր շատ բարձր գներ չնշանակել, «որովհետև նավթային արդյունաբերությունը կանոնավոր զարգացած արդյունաբերությունների շարքում չէ կարելի դասել. նա զարգացել է հսկայական թռիչքներով, իսկ այդ տեսակ զարգացող արդյունաբերությունները միշտ ենթակա են լինում ճգնաժամերի... պետք է բռնել միջին ճանապարհ», և որ ճգնաժամը «հետևանք է ընդհանուր արդյունաբերական և դրամական ճգնաժամի»[25]։ Ճգնաժամից դուրս գալու համար «Մշակն» առաջարկում էր ամենատարբեր տեսակետներ։ Մասնավորապես նշվում էր, որ անհրաժեշտ են նավթի շտեմարաններ և վարկ՝ «ժամանակավորապես, ամբարված նավթի դիմաց նյութականապես օժանդակություն տալու համար»[26]։ Մի երկրորդ հեղինակ ճգնաժամը կապում էր արտահանման սուղ միջոցների ու արտասահմանում կազմակերպված առևտրի բացակայության հետ[27], ոմանք էլ՝ արտադրության և սպառման հակասության փաստի հետ[28], իսկ մի այլ կարծիք այն կապում էր «հարստությունների կենտրոնացման» հետ, փորձում էր դրանք կանխել մանր արտադրության վրա խարսխված տնտեսաձևի արմատավորման միջոցով[29] և այլն, և այլն։ Կարելի է հանգամանորեն անդրադառնալ տնտեսական ճգնաժամերի վերաբերյալ այս տեսակետներից յուրաքանչյուրի տեսական ակունքների բացահայտմանը, սակայն ակներևն այն է, ըստ որի ճգնաժամերը հաղթահարելի են կապիտալիստական էկոնոմիկայի այս կամ այն կողմերի կարգավորման միջոցով։ Հեղինակների առաջարկած միջոցները կապիտալիստական տնտեսակարգի պատմության որևէ փորձով չեն հաստատվում։ Նրանք չնկատեցին, որ ճգնաժամերը կապիտալիստական վերարտադրության մշտական ուղեկիցն են և առաջանում են արտադրության հասարակական բնույթի ու արդյունքի մասնավոր կապիտալիստական յուրացման միջև գոյություն ունեցող հակասության հետևանքով։

Սոցիալական հարցի լուծման առումով «Մշակի» 1900-ական թվականների դիտողությունները լիբերալ հոսանքի նախորդ տասնամյակների ուղեգծումների քառակուսուց այն կողմ չէին անցնում։ Հարցի լուծման ռեֆորմատորական ուղին մնում էր իրողություն։ Այդ էր հետամտում Ե. Թուփչյանի «Սպառողական ընկերություններ» հոդվածաշարը։ Հեղինակը փորձում էր ուրվագծել սպառողական ընկերությունների տնտեսական ու սոցիալական ֆունկցիաները։ Նա հենց սկզբից ընտրել էր վերլուծության սխալ մեկնակետ, ենթադրելով, թե «գոյության կռիվը մի անվերջ շղթա է, որ իր ետևից քաշում տանում է բոլոր կենդանի արարածներին։ Տնտեսական մրցումը մի ուժեղ գործոն է, որ միշտ առաջ է մղում մարդկային կյանքը, որ միշտ պատճառ է դառնում պես-պես

---

24 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 192։

25 «Մշակ», 1901, № 83։

26 Նույն տեղում, № 132։

27 Նույն տեղում, № 190։

28 Նույն տեղում, № 249։

29 Նույն տեղում, 1902, № 71։

երևույթների»[30]։ Եվ գործնական այն առաջադրությունը, որի շրջանակներում Ե. Թոփչյանը փորձում էր մեղմել կապիտալիստական մրցության օրենքը, սպառողական ընկերությունների ստեղծումն էր։ Ընդ որում, հեղինակը նույնքան բնական էր դիտում նախնադարյան մարդկանց համատեղ աշխատանքի կոոպերատիվ ձևերը, որքան և սպառողական ընկերությունները կապիտալիզմի ժամանակ, վերջիններս համարելով «համաշխատակցության գաղափարի» բարձրագույն աստիճանը, չնշմարելով դրանց առաջացման կոնկրետ պատմական նախադրյալների, բնույթի ու նպատակների տարբերությունները[31]։

Ե. Թոփչյանը հայ գյուղի տնտեսական քայքայման պատճառները որոնում էր ոչ թե առկա հասարակական հարաբերությունների, «այլ ազգաբնակչության տնտեսական ու կուլտուրական հետամնացության մեջ»[32]։ Նրա համար որևէ տարբերություն չկար ո՛չ Շ. Ֆուրյեի ֆալանստերների ու Ռ. Օուենի «օրինակելի գաղութի», հասարակության սոցիալիստական վերակառուցման նախագծումների, ո՛չ Գ. Շուլցե-Դելիչի ու Ֆ. Ռայֆայզենի, Շ. Ժիդի ու Լ. Բերտրանի ինքնօգնության հիմունքներով կազմակերպվող արտադրական կոոպերատիվների միջոցով կապիտալիզմի շրջանակներում «սոցիալական ներդաշնակություն» ստեղծելու և բանվորական շարժումը ռեֆորմիզմի ուղին մղելու միտումների միջև։

Մարքսիզմի դասականները բազմիցս շեշտել են կոոպերատիվների միջոցով կապիտալիզմի տնտեսական ու սոցիալական ներհակությունները վերացնելու անհնարինությունը, նշել, որ դրանք, գործելով կապիտալիստական հարաբերությունների շրջանակներում և, ըստ էության, լինելով «կապիտալիստական կոլեկտիվ հաստատություններ»[33], «վերարտադրում են և պետք է վերարտադրեն առկա սիստեմի բոլոր թերությունները»[34]։

Սրանք են տնտեսագիտական հարցերի վերաբերյալ «Մշակի» տեսական ու գործնական սկզբունքները, որոնք հետաքրքրական են դարասկզբի հայ հասարակական մտայնության բնութագրության տեսակետից։

ЭКОНОМИЧЕСКАЯ МЫСЛЬ «МШАКА» В НАЧАЛЕ ВЕКА

РОБЕРТ САРИНЯН

Резюме

«Мшак» является одним из тех органов периодической печати, теоретики которого пытались в параллелях известных экономических, философских и социальных учений выявить тенденции общественного развития. Газета уделяла внимание многим теоретическим проблемам экономической науки, таким, как промышленные кризисы, экономическая политика, социальные противоречия общества и т. д. В рамках либерального и реформистского кругозора теоретики «Мшака» предлагали различные меры устранения экономических и социальных противоречий.

Несмотря на внутреннюю противоречивость их теоретических воззрений, они представляли большой интерес с точки зрения характеристики армянской общественной мысли начала века.

---

30 Նույն տեղում, 1903, № 35։

31 Նույն տեղում, № 65։

32 Կ. Պ. Կարագյան, Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 1957, էջ 53։

33 Վ. Ի. Լենին, Նվիր, հ. 45, էջ 442։

34 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս 1-ին, Երևան, 1947, էջ 430։